ԱՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ
տիկին Ս. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆԻՆ

Ե Զ Ր Ա Կ Ա Յ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Արցախի Հանրապետության նախագահի և Ազգային ժողովի 2020թ. մարտի 31-ի հերթական և Հանրապետության նախագահի ապրիլի 14-ի 2-րդ փուլի ընտրություններին մասնակցող թեկնածուների և կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ

Համաձայն ԱՀ ընտրական օրենսգրքի 26-րդ հոդվածի առաջին մասի, ԱՀ նախագահի 14 թեկնածուները, Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող 10 կուսակցություններն ու 2 կուսակցությունների դաշինքները բացել են նախընտրական հիմնադրամներ:

ԱՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2020թ. հունվարի 16-ի N 18-Ն որոշմամբ ստեղծված Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայության կողմից վերահսկվել է նախընտրական հիմնադրամների ձևավորման, հիմնադրամներ կատարված կամավոր մուծումների, դրանց հաշվարկման և ծախսերի իրականացման ողջ գործընթացը, նշված գործարքների իրականացման համար թեկնածուներին և կուսակցություններին ցուցաբերվել է մեթոդական և գործնական օգնություն:

Գրանցված ԱՀ նախագահի 14 թեկնածուները, Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող բոլոր 10 կուսակցություններն ու 2 կուսակցությունների դաշինքները ԱՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի հաշվիհամարին վճարել են ընտրական գրավներ: Նշված իրավաբանական և ֆիզիկական անձիք իրենց նախընտրական քարոզչությունը ֆինանսավորելու նպատակով <<Արցախբանկ>>, <<Հայբիզնեսբանկ>>, <<Կոնվերսբանկ>> ՓԲԸ-ներում և <<Յունիբանկ>> ԲԲԸ-ում բացել են ժամանակավոր հատուկ հաշվեհամարներ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ձեռնարկվել են բոլոր անհրաժեշտ միջոցները թեկնածուների, կուսակցությունների կողմից նախընտրական հիմնադրամներ բացելու, գործառույթներ իրականացնելու և սահմանված ժամկետում հայտարարագրեր ներկայացնելու համար: ԱՀ-ում գործող բոլոր բանկերը փետրվարի 25-ին գրություններով տեղեկացվել են գրանցված կուսակցությունների և թեկնածուների մասին, նրանց են տրամադրվել ընտրական գործընթացի վերաբերյալ բոլոր անհրաժեշտ տեղեկությունները: Նշված բանկերի համապատասխան աշխատողները նույնպես ժամանակին հրահանգավորվել են նախընտրական հիմնադրամների գործառույթների իրականացման համար: Ժամանակավոր հատուկ հաշվեհամարներ բացվելուց հետո, եռօրյա պարբերականությամբ, կենտրոնական ընտրական հանձնաժողովին են տրամադրվել տեղեկանքներ՝ ԱՀ նախագահի թեկնածուների, Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նախընտրական հիմնադրամների ֆինանսական մուտքերի և ելքերի մասին:

Ամենօրյա աշխատանքներ են իրականացվել նախընտրական հիմնադրամներ կատարվող մուծումների և ծախսերի վերահսկման համար:

Բոլոր կուսակցությունների լիազոր ներկայացուցիչները պարբերաբար հրահանգավորվել են նախընտրական հիմնադրամների սահմանված կարգով ձևավորման, ծախսերի իրականացման և հավանական խախտումներից խուսափելու համար:

Հանրապետության նախագահի ընտրություններին մասնակցող բոլոր թեկնածուները, Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող բոլոր կուսակցությունները և կուսակցությունների դաշինքները հիմնականում նախընտրական քարոզչությունն սկսվելուց հետո՝ 10-րդ օրը Կենտրոնական ընտրական հանձնաժողովին են ներկայացրել հայտարարագրեր՝ իրենց նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ:

Ընտրություններից հետո ընտրական օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում ԱՀ նախագահի 14 թեկնածուները, 10 կուսակցությունները և 2 կուսակցությունների Դաշինքները համապատասխանաբար կենտրոնական ընտրական հանձնաժողով են ներկայացրել իրենց հայտարարագրերը՝ նախընտրական հիմնադրամների մուտքերի և ելքերի վերաբերյալ, նշելով կատարված բոլոր մուծումների ժամանակագրությունը, դրանց կատարողների անունը, ազգանունը, հաշվառման հասցեն, մուծված գումարի չափը, կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի տվյալները, ինչպես նաև հիմնադրամում մնացած գումարի չափը:

Մարտի 31-ին Արցախի Հանրապետության Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում ԱՀ նախագահի և Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նախընտրական հիմնադրամների ֆինանսական միջոցներն օգտագործելու վերաբերյալ եռօրյա պարբերականությամբ ամփոփ տեղեկանքը տեղադրելուց հետո, «Ազատ Հայրենիք և ՔՄԴ» կուսակցությունների դաշինքի կողմից ներկայացված նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների, դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը, և <<Արցախբանկ>> ՓԲԸ-ի կողմից տրամադրված տեղեկանքները միմյանց հետ փոխհամեմատելով բացահայտվել է 3 217 000 ՀՀ դրամի անճշտություն: ԱՀ ԿԸՀ Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության կողմից պարզվել է, որ <<Արցախբանկ>> ՓԲԸ-ն ս.թ. մարտի 30-ին ժամը 17:00-ին (ժամը 17:00-ն հանդիսանում է օրվա բանկային գործարքների ավարտելու ժամանակը) Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության աշխատակցին տեղեկանքները տրամադրելուց հետո «Ազատ Հայրենիք և ՔՄԴ» կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցիչ Գրիգորի Հակոբյանի հետ 3 217 000 ՀՀ դրամի գործարք է իրականացրել, որի մասին ԿԸՀ Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությանը չի տեղեկացվել: Նշված փաստը ճշտելու համար <<Արցախբանկ>> ՓԲԸ-ից պահանջվել է «Ազատ Հայրենիք և ՔՄԴ» կուսակցությունների դաշինքի բանկային մուտքերի և ելքերի վերաբերյալ լրացուցիչ տեղեկանքներ, համաձայն որոնց փաստը հաստատվել է: Տեղի ունեցած անճշտության պատճառը հանդիսացել է օրվա բանկային գործարքներն ավարտելուց հետո բանկում դրամական ելք ու մուտք իրականացնելը և այդ մասին ԿԸՀ Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությանը չտեղեկացնելը: Համաձայն Ընտրական օրենսգրքի 27-րդ հոդվածի 7-րդ մասի, կատարված գործարքը չի հակասում օրինականությանը և չի համարվում խախտում:

Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունն ուսումնասիրելով և ընդհանրացնելով ներկայացված հայտարարագրերն ու մյուս փաստաթղթերը, պարզել է, որ մինչև

2020թ. մարտի 31-ը Հանրապետության նախագահի թեկնածուների և Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների), ինչպես նաև ապրիլի 14-ին՝ 2-փուլ անցած Հանրապետության նախագահի թեկնածուների և նախագահի թեկնածու առաջադրած «Ազատ Հայրենիք և ՔՄԴ» կուսակցությունների դաշինքի նախընտրական հիմնադրամներ կատարված մուտքերի և ելքերի գումարը կազմել են.

Հանրապետության նախագահի թեկնածուներ.

1-ին փուլ

մուտքերը՝ 29 725 680 ՀՀ դրամ, ելքերը՝ 29 674 480 ՀՀ դրամ,

2-րդ փուլ

մուտքերը՝ 113 000 ՀՀ դրամ, ելքերը՝ 113 000 ՀՀ դրամ:

Ընդհանուր

մուտքերը՝ 29 838 680 ՀՀ դրամ, ելքերը՝ 29 787 480 ՀՀ դրամ,

մնացորդը՝ 51 200 ՀՀ դրամ:

- ԱԺ ընտրություններին մասնակցող կուսակցություններ (կուսակցությունների դաշինքներ).

1-ին փուլ

մուտքերը՝ 42 404 700 ՀՀ դրամ, ելքերը՝ 42 362 700 ՀՀ դրամ

2-րդ փուլ

մուտքեր, ելքեր չեն կատարվել:

Ընդհանուր

մուտքերը՝ 42 404 700 ՀՀ դրամ, ելքերը՝ 42 362 700 ՀՀ դրամ,

մնացորդը՝ 42 000 ՀՀ դրամ:

Հանրապետության նախագահի թեկնածուների և Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նախընտրական հիմնադրամներում ընդհանուր մնացորդը կազմել է 93 200 ՀՀ դրամ:

Ընտրություններին մասնակցելու հայտ ներկայացրած ԱՀ նախագահի 14 թեկնածուները, Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող 10 կուսակցություններն ու 2 կուսակցությունների դաշինքները ԱՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովին են ներկայացրել նախընտրական գրավի մուծման անդորրագրերը՝ ԱՀ նախագահի թեկնածուները և կուսակցությունները՝ 1000000-ական, իսկ կուսակցությունների դաշինքները՝ 1250000-ական դրամի չափով՝ ընդհանուր 26500000 ՀՀ դրամ: Կայացած ընտրությունների արդյունքներով քվեարկված քվեաթերթիկների թվի 5 և ավելի տոկոս կողմ քվեարկված քվեաթերթիկներ ստացած նախագահի 3 թեկնածուների, 4 կուսակցությունների և քվեարկված քվեաթերթիկների թվի 4 և ավելի տոկոս կողմ քվեարկված քվեաթերթիկներ ստացած 2 կուսակցությունների դաշինքների, ԱՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահին ուղղված համապատասխան դիմումների համաձայն մինչև մեկ ամիս ժամկետում կվերադարձվի է 9500000 ՀՀ դրամ: Համապատասխան քանակի ձայներ չստացած Հանրապետության նախագահի 11 թեկնածուների՝ Քրիստին Գրիգորի Բալայանի, Սերգեյ Վասիլիի Ամիրյանի, Դավիթ Կլիմի Բաբայանի, Բելա Լաերտի Լալայանի, Հայկ Ռուբենի Խանումյանի, Դավիթ Ռուբենի Իշխանյանի, Վահան Միքայելի Բաղասյանի, Աշոտ Վլադիմիրի Ղուլյանի, Ռուսլան Էդուարդի Իսրայելյանի, Աշոտ Էդուարդի Դաղայան և Մելսիկ Ռաֆայելի Պողոսյանի, Ազգային ժողովի 6 կուսակցությունների՝ «Ազգային վերածնունդ»,

«Անկախության Սերունդ», Արցախի հեղափոխական, Միացյալ Հայաստան, Արցախի Պահպանողական և Լեռնային Ղարաբաղի կոմունիստական կուսակցությունների ընտրական գրավի մինչև 30%-ը, այսինքն՝ 5100000 դրամը ԱՀ ընտրական օրենսգրքի 40-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ հաստատված նախահաշվին համապատասխան, կարող է օգտագործվել ընտրական վարչարարության փորձի ուսումնասիրման, ընտրական վարչարարության բարձրացմանն ուղղված ծրագրերի իրականացման, ընտրական հանձնաժողովների տեխնիկական վերազինման և ընտրական օրենսդրությանը վերաբերող նյութերի պատրաստման և հրատարակման համար: ԱՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ ընտրական գրավի հատուկ հաշվեհամարում մնացած մյուս միջոցները Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ կարող են օգտագործվել ընտրական հանձնաժողովների տեխնիկական վերազինման և ընտրական օրենսդրությանը վերաբերող նյութերի պատրաստման և հրատարակման համար:

Նախագահի թեկնածուների և կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) նախընտրական հիմնադրամների մնացորդները (համապատասխանաբար 51200 և 42000 դրամ) գործող օրենսդրության համաձայն կփոխանցվեն պետական բյուջե, եթե ընտրական օրենսգրքով սահմանված եռամսյա ժամկետում չօգտագործվեն բարեգործական նպատակներով:

Կուսակցությունների լիազոր ներկայացուցիչները, ինչպես նաև թեկնածուների մեծ մասը բարեխղճորեն կատարել են իրենց հիմնադրամների հետ կապված գործառույթները, ինչը չի կարելի ասել առանձին թեկնածուների և նրանց լիազոր ներկայացուցիչների մասին:

Չնայած վերահսկիչ-վերստուգիչ ծառայության մասնագետների գործադրած ջանքերին, որոշ թեկնածուներ և կուսակցություններ հայտարարագրերը ներկայացրել են ուշացումներով, ոչ պատշաճ ձևով որոշակի թերացումներով, որոնք վերահսկիչ-վերստուգիչ ծառայության մասնագետների կողմից շտկվել են:

ԱՀ նախագահի թեկնածուների, Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) կողմից նախընտրական հիմնադրամների ձևավորման, մուտքերի և ելքերի առումով կոպիտ խախտումներ հիմնականում չեն արձանագրվել:

ԱՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի
վերահսկիչ-վերստուգիչ ծառայության ղեկավար **Գ. ԱՎԱՆԵՍՅԱՆ**
20.04.2020թ.

ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՆՔ

2020թ. Ապրիլի 14-ի ԱՀ նախագահի ընտրությունների 2-րդ փուլին մասնակցող նախագահի թեկնածու առաջադրած կուսակցությունների դաշինքի նախընտրական հիմնադրամի ֆինանսական միջոցների օգտագործման վերաբերյալ

Հ/Հ	կուսակցությունների դաշինքների անվանումը	Մուտքեր (հազ.դրամ)		Ընդամենը	Ելքեր (հազ.դրամ)		Ընդամենը
		1-ին փուլում Ընդամենը	2րդ փուլում Ընդամենը		1-ին փուլում Ընդամենը	2րդ փուլում Ընդամենը	
2	«Ազատ Հայրենիք և ՔՄԴ» կուսակցությունների դաշինք	17814,0	0,0	17814,0	17813,1	0,0	17813,1
ԸՆԴԱՄԵՆԸ		**17814,0**	**0,0**	**17814,0**	**17813,1**	**0,0**	**17813,1**

ԱՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի
վերահսկիչ-վերստուգիչ ծառայության ղեկավար Գառնիկ Ավանեսյան

20 ապրիլի 2020թ.

ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՆՔ

2020թ. Ապրիլի 14-ի ԱՀ նախագահի ընտրությունների 2-րդ փուլին մասնակցող թեկնածուների նախընտրական հիմնադրամների ֆինանսական միջոցների օգտագործման վերաբերյալ

Հ/Հ	ԱՀ նախագահի ընտրություններին մասնակցող թեկնածուների Ա.Ա.Հ.	Մուտքեր (հազ.դրամ)		Ընդամենը	Ելքեր (հազ.դրամ)		Ընդամենը
		1-ին փուլում Ընդամենը	2րդ փուլում Ընդամենը		1-ին փուլում Ընդամենը	2րդ փուլում Ընդամենը	
1	Մայիլյան Մասիս Սամվելի	3787,0	0,0	3787,0	3786,0	0,0	3786,0
2	Հարությունյան Արայիկ Վլադիմիրի	9236,0	113,0	9349,0	9234,2	113,0	9347,2
ԸՆԴԱՄԵՆԸ		13023,0	113,0	13136,0	13020,2	113,0	13133,2

ԱՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի
վերահսկիչ-վերստուգիչ ծառայության ղեկավար Գառնիկ Ավանեսյան

20 ապրիլի 2020թ.